ՆՈՐ ՎԱՐԱԳԱՎԱՆՔԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ

ՀՐԱՉՅԱ ՔԱՐՏՍՇԵՅԱՆ

Անապատի կամ Նոր Վարագավանքի վանական համալիրը Հայաստանի զարգացած ավատատիրության դարաշրջանի մեծարժեք հուշարձաններից է։ Այն գտնվում է ՀՍՍՀ Շամշադինի շրջանի Վարագալան գյուղից 3,5 կմ հարավ-արևմուտք ընկած արևելահայաց սարալանջի անտառապատ բացատում։ Այս ուշագրավ ճարտարապետական համալիրը ժամանակին Վահրամյանների հզոր իշխանության հոգևոր կենտրոնն էր։ Վահրամյանների վասալներն էին վանքախմբի կառուցողները՝ Նոր Բերդի Կյուրիկյան իշխաններ Դավիթ Բ-ն և նրա որդի Վասակը[1]։ Կյուրիկյանների ավատական հարստության այս վերջին ներկայացուցիչների և նրանց գեղաշեն ձեռակերտի մասին արժեքավոր տեղեկություններ են հաղորդում Կիրակոս Գանձակեցին[2] և Վարդան Արևելցին[3]։ Նախքան վանքախմբի հիմնադրվելը այստեղի ժամանակագրության, պատմական անձերի ու իրադարձությունների մասին գրավոր աղբյուրներ չեն պահպանվել։ Սակայն, ելնելով մի շարք փաստացի նյութերից, կարելի է ենթադրել, որ հուշարձանախմբի ստեղծվելուց առաջ այստեղ բնակատեղի է եղել։ Այս եզրակացության օգտին են խոսում համալիրից հարավ գտնվող ձորի հյուսիսային լանջին ընկած հնաոճ (հավանաբար IX դ.) խաչքարը, ինչպես նաև՝ գլխավոր եկեղեցու (XIII դ.) արևելյան երկրորդ հարկի ավանդատների առաստաղներում ագուցված խոշոր, հնատես և պարզ (հավանաբար X դ.) խաչքարերը։ Մինչև վերջերս հուշարձանների պատերին և դրանց շրջակայքում գտնվող խաչքարերի վրա պահպանված հնագույն արձանագրությունը համարվում էր 1198 թ. վիմագիրը, որն ավետում է համալիրի առաջին կառույցի շինարարության ավարտը։ Սակայն մեծ գավթի փլատակներից ի հայտ եկած խաչքարի բեկորի (ԻԹ ՈՒ ԵՍ ՅՎ ԿԱ ՆԳ[Ն]ԵՑԻ Խ[ԱՉ]Ս Ի...Ե... ԾՆՈՂԱՑ ԻՄՈ) թվակիր արձանագրությունը հնարավորություն ընձեռեց այդ թվականը հավաստիորեն ետ տանելու 40 տարով։ Ուրեմն, դեռևս XII դ. կեսերին վանքի տեղում բնակատեղի է եղել։ Համալիրի Անապատ անվան վերափոխումը Նոր Վարագավանքի կապված է մոնղոլական հրոսակների ներխուժումների հետ, որոնց հետևանքով Վասպուրականի ավերված Վարագա վանքի վանահայր Ղուկասը այնտեղ պահվող համբավավոր ս. Նշանը (խաչը) տեղափոխում և 1231 թ. հաստատում է այստեղ։ Ի հիշատակ ավերված վանքի, Անապատը վերանվանվում է Նոր Վարագավանք։

Խնդրո առարկա հուշարձանախմբին անդրադարձել են տարբեր հեղինակներ։ Անցյալ դարում նրա մասին հակիրճ տեղեկություններ են թողել Ս. Ջալալյանցը[4], Հ. Շահխաթունյանցը[5], Մ. Փափազյանցը[6] և Մ. Բարխուտարյան-

---

1 Ա. Ի. Շահնազարյան, Վահրամյանների իշխանությունը մոնղոլների հետախուզական արշավանքի և Ջալալ էդ-Դինի նվաճումների ժամանակ (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1980, № 6, էջ 50, 52)։

2 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 153։

3 Վարդան Վարդապետ, Հավաքումն պատմության, Վենետիկ, 1862, էջ 153—155։

4 Ս. Ջալալյանց, Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան, մասն Ա, Թիֆլիս, 1842, էջ 159։

5 Հովհաննես Շահխաթունյանց, Ստորագրություն Կաթողիկե Էջմիածնի, Էջմիածին, 1848, էջ 368—370։

6 Մ. Փափազյանց, Հնություններ հայրենյաց, գ. 1, Վաղարշապատ, 1889։

ցր[7]։ Հետագայում վանքախմբին ուղղակի կամ անուղղակի անդրադարձել են Կ. Կոստանյանցը[8], Հ. Ակինյանը[9], Կ. Ղաֆադարյանը[10], Հ. Աճառյանը[11], Հ. Ոսկյանը[12], Հ. Խալփախչյանը[13], Ս. Բարխուդարյանը[14], Վ. Խաչատրյանը[15]։ Սակայն նրանք կամ հարցին մոտեցել են պատմաբանասիրական քննարկումների դիրքերից, կամ էլ՝ նեղ մասնագիտական խնդիրների պարզաբանման առնչությամբ, հպանցիկ անդրադարձել են համալիրի առանձին կառույցներին։ Նոր Վարագավանքի շինարարական ձևերի վերլուծությունը փորձել է տալ Գ. Սարգսյանը[16], որը, սակայն, մակերեսային նկարագրություններից այն կողմ չի անցել, թույլ տալով զգալի վրիպումներ։ Համալիրի առանձին հուշարձանները և դրանց որոշ արձանագրություններ սխալներով են ներկայացված Վ. Վանյանի հոդվածում[17]։ Ս. Մնացականյանը իր «Հայկական գավիթների ճարտարապետությունը»[18] աշխատության մեջ փոխհատվող կամարներով գավիթների առաջացման հարցերի կապակցությամբ նշել է նաև Նոր Վարագավանքի մեծ գավիթը, սակայն այն մասնավոր քննության չի ենթարկել։ Վանքախմբի մասին համառոտ տեղեկություններ կան «Հայկական սովետական հանրագիտարանի» 8-րդ հատորում[19]։ Գրաբարի լեզվական որոշ հարցեր և անձնանուններ ճշտելու համար համալիրի և նրա մի քանի արձանագրությունների մասին նշված է «Դիվան հայ վիմագրության» VI պրակում[20]։ Այս ամենը հիմք են տալիս պնդելու, որ քննվող հուշարձանախումբը ցայսօր պատշաճ մասնագիտական հետազոտության չի ենթարկվել։

Նոր Վարագավանքի վանական համալիրը բաղկացած է երկու եկեղեցիներից, կրկնահարկ տապանատնից ու մատուռից և երկու գավիթներից։ Սրանցից մոտ 100 մ հարավ-արևմուտք և 200 մ հյուսիս-արևմուտք պահպանվել են մեկական մատուռներ, որոնցից վերջինի շուրջ տարածված է միջնադարյան գերեզմանատունը։ Մինչև անցյալ դարի վերջերը վանքի շրջակայքում նկատվել են պարիսպների և միաբանների խուցերի ավերակները, իսկ գլխավոր եկեղեցու հյուսիսային ճակատին կցված է եղել մի մատուռ[21]։ Համալիրը կա-

---

7 Մակար եպ. Բարխուտարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 336—338։

8 Կ. Կոստանյանց, Վիմական տարեգիր, ս. Պետերբուրգ, 1913, էջ 75, 80։

9 Հ. Ն. Ակինյան, Դարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, խաղբակյանք կամ Պողոյանք հայոց պատմության մեջ, պատմահնագիտական ուսումնասիրություն («Հանդես ամսօրյա», 1929, էջ 445, տողատակի ծանոթությունը)։

10 Կարո Ղաֆադարյան, Պատմահնագիտական դիտողություններ Նոր Բերդի Կյուրիկյան իշխանության մասին («Տեղեկագիր» Արմֆանի, 1940, № 4—5, էջ 165—173)։

11 Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, Գ, Երևան, 1946, էջ 585։

12 Համազասպ Ոսկյան, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 208—214։

13 С. Х. Халпахчьян, Двухабсидные базилики Армении (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1954, № 8, էջ 51—62, նույնի՝ Архитектура Армении („Всеобщая история архитектуры", т. 3, М.—Л., 1965, с. 260—261), նույնի՝ Санаин, М. 1973, с. 58.

14 Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 48—51, 141։

15 В. А. Хачатурян, Полихромия в средневековой архитектуре Армении (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1977, № 4, էջ 68, 73, 75)։

16 Գ. Սարգսյան, Անապատ կամ Նոր Վարագ վանքը և նրա վիմագրությունը («Էջմիածին», 1952, սեպտեմբեր—հոկտեմբեր, էջ 21—29, նոյեմբեր—դեկտեմբեր, էջ 27—34)։

17 Վ. Վանյան, Նամշադինի հուշարձան վանքերը («Էջմիածին», 1980, ԺԲ, էջ 49—50)։

18 С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952, с. 6, 15, 58, 60, 71 և այլն։

19 «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 8, Երևան, 1982, էջ 368—369։

20 «Դիվան հայ վիմագրության», պրակ VI, կազմեցին Ս. Ա. Ավագյան, Հռ. Մ. Ջանփոլադյան, Երևան, 1977, էջ 118, 166, 183, 190։

21 Մակար եպ. Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 336—338։

ուցված է դեղնակապտավուն բաց երանգի տեղական ֆելդիտից, հավանաբար նկատի ունենալով բնության հետ ներդաշնակ կապ ստեղծելու հանգամանքը։

Աճապատ վանքի եկեղեցին։ Գտնվում է համալիրի հարավ-արևելյան կողմում։ Հատակագծում ուղղանկյուն (7,40×5,14 մ), միանավ, թաղակապ կառույց է (թաղն ամբողջովին քանդված է)։ Ներքուստ հյուսիսային և հարա-



Նկ. 1. Նոր Վարագավանք. համալիրի հատակագիծը։

վային պատերին կից են թաղակիր կամարը պահող մեկական կիսասյուներ։ Արևելյան մասում գտնվում է ավագ խորանը, որը միջանկյալ պատով բաժանված է երկու անհավասար բեմերի։ Դրանցից յուրաքանչյուրը հետին՝ կիսաբոլորակ, պատին ունի մեկական լուսամուտ։ Արևմտյան մասում միակ մուտքն է, որից վերև կա մի գեղեցկաձև պատուհան։ Կառույցի ոչ մեծ ծավալը դրված է բազմաստիճան գետնախարսխի վրա՝ թելադրված տեղանքի պայմաններով։ Այս եկեղեցին համալիրի առաջին շինությունն է։ Նրա կառուցման մասին պահպանված հինգ շինարարական արձանագրություններից մեկը՝ մուտքի բարավորի վիմագրությունը, ունի թվագրում, ըստ որի եկեղեցին կա-

ուցվել է 1198 թ., Կյուրիկյան Դավիթ իշխանի կողմից[22]։ Մյուս շինարարական արձանագրությունը գտնվում է տապանատան մուտքի բարավորը եզերող շրջանակի վրա։ Նրանում թեև առաջինը հիշատակված է եկեղեցին, բայց թվագրումը վերաբերում է տապանատանը (1200 թ.)։ Եկեղեցու արևմտյան ճակատի հյուսիսակողմյան և մեծ եկեղեցու (ս. Աստվածածին) գլխավոր շքամուտքի բարավորի վիմագրերում ևս նշված է, որ այն կառուցել է Դավիթ իշխանը։ Հաջորդ արձանագրությունը գտնվում է եկեղեցու մուտքից ձախ ագուցված խաչքարի վերին կամարաձև մասում, որտեղ նշված է «կենսակիր Նշանի» կառուցման մասին։ «Ս. Նշան» հիշատակություն կա նաև մուտքի աջ կողմում գտնվող խաչքարի վերին մասում։ Եկեղեցու այդ անունը, հավանաբար, կապված է Վարագա ս. Նշանի հետ, որը նախքան գլխավոր եկեղեցու շինարարության ավարտը, անկասկած, պահվում էր այդտեղ։ Վանքախմբին անդրադարձած վերոհիշյալ հեղինակների մեծ մասը ս. Նշան է անվանել գլխավոր եկեղեցին, սակայն մատենագրությունից հայտնի է, որ այն կոչվել է ս. Աստվածածին[23]։

Հայ ճարտարապետության պատմության մեջ իրենց ներքին հորինվածքով առանձնակի հետաքրքրական են երկխորան եկեղեցիները։ Արևելյան կողմում մեկից ավելի բեմերի առկայությունը Հ. Խալփախչյանը բացատրում է երկու տարբեր սրբերի կամ աշխարհիկ մարդկանց նվիրված լինելու հանգամանքով և նման կառույցները դասում է մեմորիալ հուշարձանների շարքը[24]։ Սակայն այդ ենթադրությունը չի կարող ընդհանրացվել քննվող եկեղեցու համար, քանի որ այստեղ փաստացի տվյալներ կան կառույցի բնույթի և անվան վերաբերյալ։ Դավիթ Բագրատունու կառուցած շինություններից յուրաքանչյուրը որոշակիորեն ունի իր բնույթին համապատասխան անվանումը՝ տապանատուն, որն անտարակույս մեմորիալ կառույց է, և եկեղեցի՝ իր սովորական նշանակությամբ։ Երկխորան հատակաձևը XIII դ. հետո լայն տարածում չի գտել։ Պահպանված մի քանի օրինակներին՝ ս. Սիոն (Եղեգնաձորի շրջան, XIII դ.), ս. Հակոբ (Սանահին. XIII դ.), ս. Հռիփսիմե (Դոշավանք, XIII դ.), երկու հատ՝ Եղիշ Առաքյալ (Ջրվշտիկ) վանքում (ԼՂԻՄ) և Ապարանի շրջանի Ջորագլուխ գյուղի մոտի եկեղեցու հատակաձևին[25], պետք է ավելացնել Շամշադինի շրջանի Այգեձոր գյուղից մոտ 1 կմ հարավ՝ Մինաս թալա կոչվող հանդամասում, մեր հայտնաբերած կառույցը։ Սրա հատակագիծը (արտաքին չափերով) բավական մոտ է քառակուսուն (5,80×5,20 մ), որի հետևանքով ուղղանկյունաձև աղոթասրահի երկայնական առանցքը համընկել է հյուսիս-հարավ ուղղությանը։ Անապատի եկեղեցու աղոթասրահի ձգվածությունը արևելքից-արևմուտք է, որով այն տարբերվում է Մինասի թալայի և ս. Սիոն ու ս.Հարություն եկեղեցիներից (վերջին երկուսի աղոթասրահները քառակուսի են[26])։ Ներքին տարածքի հիմնական շեշտված ծավալները բավական խորն ընկած խորաններն են։ Դրանցից աչքի է ընկնում հարավայինը, որն ունեցել է առաջնային նշանակություն։ Դա երևում է ինչպես նրա մեծ չափերից, այնպես էլ հարդարանքից։

Եկեղեցու ներքին տարածությունը կազմակերպող կարևոր տարրերից են երկայնական պատերի կենտրոններում կցված երեք քառորդ որմնասյուները։ Ժամանակին աչքի են դարձվել դրանց խիստ ինքնատիպ խոյակները, որոնցից այժմ փշրանքներ են մնացել։ Արտաքուստ եկեղեցին ոչնչով չի տարբեր-

---

22 Հ. Խ. Խալփախչյանը սխալմամբ այն թվագրել է XIII դարով («Санаин», с. 59, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1954, № 8, էջ 60)։

23 Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 153։

24 О. Х. Халпахчьян, Санаин, с. 58 (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1954, № 8, էջ 53)։

25 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1983, № 2, էջ 144։

26 ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1954, № 8, էջ 60։

վում երկթեք ծածկով դահլիճային տիպի կառույցներից։ Նրա երկայնական ճակատների մեծ մասը ծածկված է հյուսիսից և հարավից կից կառույցներով, իսկ երևացող հատվածները զուրկ են հարդարանքից։ Հիմնական ուշադրությունը կենտրոնացվել է եկեղեցու արևմտյան ճակատի շքամուտքի և նրա երկու կողմերում պատերի մեջ ագուցված կամարաձև շքեղազարդ խաչքարերի վրա։ Կ. Ղաֆադարյանը, Հ. Աճառյանը և Ս. Բարխուդարյանը ձախակողմյան

Նկ. 2. Նոր Վարագավանք. համալիրի ընդհանուր տեսքը հարավ-արևելքից։

խաչքարից ներքև պահպանված «ԽԱՉՍ ԹԱԱՐԻՆ Է» վիմագրության մեջ նշված անձնանունը վերծանել են Թաար և նրան համարել խաչքարերի ու եկեղեցու մնացած քանդակների հեղինակը[27]։ Իսկ Ս. Ավագյանը գտնում է, որ այն Թամար անվան կրճատ գրությունն է[28], որն ավելի հավանական է։

Արևմտյան ճակատի հարդարանքը մուտքից վերև ամբողջականանում է կողքերից զույգ կիսասյունիկներով մշակված և ճոխ պսակով ավարտված փոքրիկ լուսամուտով։ Այն ներքևից վեր բարձրանալով աստիճանաբար նեղանում է՝ ճակատի վրա ստեղծելով վերծիգության պատկեր։ Եկեղեցու արևելյան ճակատը այլ ճարտարապետական լուծում է ստացել։ Այստեղ հորինվածքի ստեղծման մեջ էական նշանակություն ունեն խորանների լուսամուտները, որոնց շուրջը և կազմակերպված է ողջ դեկորը։ Հարավակողմյան պատուհանը, արևմտյանի օրինակով, եզրերից ունի զույգ կիսասյուներ, որոնք արված են հատկապես մեծ խորանը շեշտելու նպատակով։ Լուսամուտների կիսաշրջան գլխամասերն առնված են դրանց վերևով անցնող բարդ տրամա-

27 Կարո Ղաֆադարյան, նշվ. հոդվ., էջ 169, Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, Բ, Երևան, 1944, էջ 261, Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 141։

28 Ս. Ա. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 91—93։

տավոր ընդհանուր գոտու մեջ, որը պատուհանների միջանկյալ մասում, միաձիգ հորիզոնականությունից խուսափելու համար, ձևափոխված է պսակաձև կիսաշրջանի։ Պսակ-գոտու անմիջապես վերևով անցնում է եզան և կոցահարող թռչունների, նոնենու տեսքով կենաց ծառի, զամբյուղների, վարդյակի և հավերժության նշանի պատկերներով քանդակաշարք, որն ունի գաղափարական որոշակի իմաստ[29]։ Անապատի եկեղեցին իր ճարտարապետական հարդարանքով և ծավալահատակագծային առանձնահատկություններով եզակի է հայկական նմանօրինակ կառույցների շարքում՝ հանդիսանալով դրանց հորինվածքի ձևաստեղծման վերջին փուլերից մեկը։

Անապատին կից հուշարձանները։ Փոքր չափերի այս երկու կառույցները կցված են Անապատ եկեղեցու հյուսիսային և հարավային պատերին։ Դրանք պատկանում են երկհարկ[30] հուշարձանների դասին, որոնցում, սակայն, առկա են հորինվածքային մի շարք առանձնահատկություններ։ Պահպանվել են կառույցների առաջին հարկերը, որոնք ուղղանկյուն հատակագծով, արևելյան մասերում բեմեր տեղադրված թաղակապ շինություններ են։ Երկրորդ հարկերն ունեցել են կլոր հատակագծեր, որոնց թմբուկաձև և վեղարով ավարտված ծավալները ուղղակիորեն դրվել են առաջին հարկերի վրա։ Սրանցից պահպանվել են միայն ստորին երկու շարքերը և նշմարելի են արևմտյան մասերում գրտնված մուտքերի տեղերը։ Հյուսիսակողմյան հուշարձանը կառուցել է Անապատի եկեղեցու մեկենաս Դավիթ Բագրատունին, 1200 թ.՝ որպես տոհմական տապանատուն։ Տեղում կատարված ուսումնասիրություններից պարզվում է, որ այն սկզբնապես եղել է երկթեք ծածկով սովորական մատուռ, որի վրա մինչև 1220-ական թվականներն ընկած ժամանակամիջոցում դրվել է երկրորդ հարկաբաժինը (1220-ական թթ. սկսվել է կառուցվել մեծ եկեղեցին, որն անմիջապես մոտ է գտնվում տապանատան հյուսիսային ճակատին, իսկ վերջինիս վրա պահպանվել են ճակտոնի թեք բարձրացող քիվը և նրա հետքերը, ինչպես նաև դրանց հատող հորիզոնական քիվից մի հատված, որը վկայում է հետագա ճակտոնավորման մասին)։ Արդեն վերջնականապես ձևավորված տապանատան ծավալատարածական հիմքի վրա կառուցվել է հարավակողմյան շինությունը։ Պատմական աղբյուրներում վերջինիս ինչ լինելու մասին որևէ տեղեկություն չկա, սակայն կասկածից վեր է, որ դրա առաջացումը պայմանավորված էր նախ գործառական և ապա գեղարվեստական հարցերի լուծմամբ։ Սկզբնապես, երբ գոյություն ունեին միայն եկեղեցին և տապանատունը, բնականաբար, պետք է կարիք զգացվեր օժանդակ սենյակների՝ սրբազան անոթների, ավանդների և այլ առարկաների պահպանման համար։ Այդ նպատակին, հասկանալի պատճառով, չէր կարող ծառայել տապանատունը, որը թերևս միակ կառույցն էր, երկրորդ հարկի հավելման միջոցով, այդ պահանջը բավարարելու համար։ Սակայն ներքուստ ընդամենը 90 սմ տրամագծով փոքր կառույցը լիարժեքորեն չէր համապատասխանում նշված պահանջներին և ընդարձակման նպատակով նրան համաչափ տեղադրությամբ, նույն օրինակով, կառուցվում է հարավակողմյան շինությունը, որով ամբողջականում է Անապատի եռակառույց համալիրը։ Ելնելով հուշարձանների կառուցման հաջորդականությունից, կարելի է մոտավոր ճշտությամբ որոշել հարավակողմյան երկհարկ մատուռի կառուցման ժամանակաշրջանը։ Ըստ այդմ այն կարող էր կառուցվել տապանատան կամ գլխավոր եկեղեցու շինությունների ավարտից հետո միայն։ Հաշվի առնելով նրա հորինվածքային և կառուցողական անմիջական կապը տապանատան հետ, ինչպես և վերջինիս գործառական տեսակետից փոքր ծավալները, կարելի է ենթադրել, որ այն կառուցվել է տապանատնից հետո։ Ամենայն հավանականությամբ, նրա մեկենասը ևս նույն Դավիթ Բագրատունին է, որը սկսել և այս կառույցով ավարտել է Անա-

---

29 Ա. Շ. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Երևան, 1955, էջ 251—307։

30 Հուշարձանախմբին անդրադարձած հեղինակներից ոչ մեկը չի նկատել, որ այդ կառույցները կրկնահարկ են եղել։

պատի համալիրը։ Քիչ է հավանական այն վարկածը, թե այս մատուռը կառուցել է Դավթի որդին՝ Վասակը, քանի որ այդ դեպքում, որպես իր երախայրիք, նա կթողներ որևէ հիշատակություն։ Բացի այդ, Անապատի եկեղեցու կիսաեղծ կրկնագիր արձանագրության մեջ կա ՌԿԸ (1219) թվագիրը, որը վկայում է, որ Դավիթը այդ ժամանակ դեռևս թագավորում էր, իսկ Վասակը մեծ եկեղեցու շինարարությունը սկսել է մոտավորապես 1220-ական թթ.։



Նկ. 3. Նոր Վարագավանքի Անապատ համալիրը հարավ-արևմուտքից։

Հասկանալի է, որ այդ ժամանակ իշխողն արդեն Վասակն էր, որը զբաղված էր գլխավոր եկեղեցու կառուցմամբ։ Դժվար թե այդ պատասխանատու շինության ընթացքում, ինչպես և ավարտից հետո նա ձեռնամուխ լիներ մեկ այլ կառույցի իրականացմանը, քանի որ դրա կարիքն այլևս չկար։ Իսկ եթե մի պահ ընդունենք, որ այն կառուցել է Վասակը, ապա այդ դեպքում կառույցի առաջացումը պետք է բացատրել զուտ գեղարվեստական տեսանկյունով, որն անընդունելի է, քանի որ «...կրոնական վարդապետությունները և ծեսերն ավելի դեր կկատարեն հատակագծերու համաչափության և դասավորության մեջ, քան արվեստն ու ճաշակը»[31]։ Թերևս, եթե Վասակը տապանատունը ընդարձակելու նպատակով կառուցեր դա որպես դամբարան, ապա նրա առաջին հարկարաժնի ավելի մեծ չափերը պայմանավորված կլիներ այնտեղ նախատեսվելիք թաղումներով, որտեղ պետք է թաղվեին ինքը և իր կին Խաթունը (Վասակը սերունդ չի ունեցել)[32]։ Սակայն նրա հատակը ծածկված է 10—15 սմ հաստությամբ սալերով, և թաղումների հետքեր չեն նշմարվում։ Հետևաբար, քննվող երկհարկ մատուռը կառուցվել է Դավիթ իշխանի օրոք, XIII դ. առաջին մեկուկես տասնամյակի ընթացքում։

Տապանատուն հիշված կառույցում, որն առայժմ հայտնի միակ կոթողային հուշարձանն է, ի սկզբանե թաղումներ նախատեսված չեն եղել։ Թաղում-

31 Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, էջ 120։

32 Կարո Ղաֆադարյան, նշվ. հոդվ., էջ 172։

ները իրականացվել են համալիրի հուշարձանների ճակատային կողմերում, ուր պահպանվել են եղծված արձանագրություններով մի քանի տապանաքարեր (դրանք, անկասկած, պատկանում են Կյուրիկյանների տան ներկայացուցիչներին)։ Այս համողման հանգելը բացատրվում է տապանատան փոքր ծավալով և համալիրի հյուսիսային, հարավային ու մասամբ արևելյան ճակատների մոտ տեղանքի ոչ հարմարավետ դիրքով։ Հավանաբար, տապանատունը ծառայել է հուղարկավորությունների համար, որպիսի օրինակներ ունենք միջնադարյան (նաև ժամանակակից) հանգստարաններից։ Նկատենք նաև, որ 555 թ. Դվինի 2-րդ ժողովի որոշումներից մեկով արգելվել էր եկեղեցիներում թաղումներ կատարել[33], իսկ դիտարկվող կառույցում առկա է դրա կարևորագույն տարրը՝ արևելյան բեմը, որից բխում են նրա պաշտամունքային գաղափարները։ Այն, ըստ Սահակի կանոնների, ի վերջո, ծառայում է այն նույն նպատակին, որն առարկայացված է եկեղեցի, վանք, մատուռ և այլ հասկացությունների մեջ[34]։ Տվյալ դեպքում տապանատունը չենք կարող դասել կրկնահարկ դամբարան-եկեղեցիների շարքը, քանի որ, ինչպես պարզվեց, նրա երկրորդ հարկը հետո է ավելացվել և, բացի այդ, մեզ հայտնի դամբարան-եկեղեցիներում առաջին հարկաբաժինները, որոնք զուրկ են բեմերից, նախատեսվել են թաղումների համար, իսկ երկրորդ հարկերը ծառայել են որպես եկեղեցիներ։

Անապատի եռակառույց համալիրի հուշարձաններն իրենց մանրամասներով անքակտելիորեն շաղկապված են միմյանց հետ։ Դրանք արտահայտված են ինչպես նրանց առաջին հարկերի մուտքերի և վերջինների շրջակա հարդարանքների, այնպես էլ ողջ ուրվապատկերային լուծման մեջ։ Այս համակառույցի հորինվածքային որոնումներում էական դեր են խաղացել դեռևս վաղ միջնադարում արմատավորված շինարարական որոշակի սկզբունքներ։ Դա Թ. Թորամանյանի խոսքերով ասած՝ հայ ճարտարապետության սեփականությունը հանդիսացող լուսավորչավանդ ձևն է[35], երբ որոշ կառույցների (ենթադրաբար Մայր Տաճարի[36], Ավանի[37]) անկյունային սենյակները կամ սյունասրահների (Տեկոր[38]) եզրային անկյունները ավարտվում էին աշտարակաձև սրածայր ծավալներով։ Պահպանելով իր սկզբնական հորինվածքային հատկանիշները, այդ սկզբունքը ավանդաբար փոխանցվել և ճարտարապետական նոր մեկնաբանություններով վերարտադրվել է զարգացած միջնադարի մի շարք կառույցներում՝ Անիի Առաքելոց եկեղեցում, Հոռոմոսի հաղթակամարում, Տեղերի և Մռավյանի վանքերում, Զաքարյանների դամբարանում։ Դրանցից, քննվող հարցի առնչությամբ, արժանահիշատակ է Սանահնում գտնվող Զաքարյանների դամբարանը (ենթադրվում է, որ ի սկզբանե այն պատկանել է Կյուրիկյաններին[39]), որն իր ուրվապատկերային լուծմամբ մոտ է կանգնած Անապատի հուշարձանախմբին։

Ի մի բերելով վանական համալիրի մասին շարադրվածը, նշենք, որ թեև այն կառուցվել է հաջորդաբար (թեկուզև կարճ ժամանակամիջոցում), այդուհանդերձ, ճարտարապետական մի կուռ ամբողջականություն է, որի կառուցողական և հորինվածքային բացառիկ հատկանիշներում ի հայտ են եկել մեր շինարար նախնյաց ստեղծագործական ձիրքերը։

---

33 Ն. վ. Մելիքսեթ-Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունքը, Շուշի, 1903, էջ 381—382։

34 Նույն անդում, էջ 427։

35 Թորոս Թորամանյան, նշվ. աշխ., էջ 288։

36 Թ. Թորամանյան, Էջմիածնի տաճարը, Թիֆլիս, 1910, էջ 19—20։

37 Տիրան Մարության, Ավանի տաճարը, Երևան, 1976, էջ 30—32։

38 Է. Մելիքյան, Տեկորի տաճարի արտաքին սյունասրահը («Գիտություն և տեխնիկա», 1979, № 4, էջ 39—43)։

39 О. Х. Халпахчьян, Проблемы истории и культуры народов СССР («Сборник научных трудов», № 4, М., 1977, с. 16—20).

Ս. Աստվածածին եկեղեցին: Համալիրի գլխավոր կառույցն է, որն իշխող տեսք ունի ինչպես հուշարձանախմբում, այնպես էլ շրջակա միջավայրում։ Այն տեղադրված է համակառույցի հյուսիս-արևելյան մասում։ Եկեղեցին դրսից ուղղանկյուն (10,25×15,40 մ), ներքուստ խաչաձև հատակագծով գմբեթավոր դահլիճ է։ Նրա կառուցման վերաբերյալ պահպանվել են արժեքավոր երկու հիշատակություններ։ Դրանցից առաջինը, որը հավանաբար վերաբերում

Նկ. 4. Անապատի եկեղեցու հյուսիսակողմյան խաչքարի վերի քանդակներից։

է կառուցման սկզբնական շրջանին, արձանագրված է արևմտյան մուտքի շրջանակի վերին հորիզոնական գոտում և կրում է 1224 թվականը[40], իսկ նույն մուտքի բարավորին պահպանված ընդարձակ վիմագրության մեջ նշված է, որ եկեղեցու կառուցումն ավարտվել է 1237 թ.։ Երկու արձանագրություններում էլ հիշատակված է, որ եկեղեցին կառուցել է Դավիթ իշխանի որդի Վասակը։ Օծումը տեղի է ունեցել 1240 թ., որի, ինչպես և նրա ս. Աստվածածնին նվիրված լինելու մասին իմանում ենք Կիրակոս Գանձակեցուց. «...Եւ եղև աւարտումն եկեղեցւոյն, որ օծաւ և կնքեցաւ յանուն սրբոյ Աստվածածնի ի ՈՁԹ (1240) թուականին հայոց»[41] վկայությունից։ Եկեղեցու ուշ օծման հանգամանքը պետք է կապել մոնղոլական ավերիչ արշավանքների հետևանքով Հայաստանում ստեղծված քաղաքական բարդ իրադրությունների հետ։

Եկեղեցուն վերաբերող երկու անուղղակի հիշատակություններ են պահպանվել Ղուկաս վարդապետի՝ ներքուստ հյուսիսային պատի, և Հայրուտի՝

---

40 Արձանագրությունները մասամբ հրատարակել են Կ. Ղաֆադարյանը (նշվ. հոդվ., էջ 167—169, 171—173) և Գ. Սարգսյանը (նշվ. աշխ., էջ 27—34)։ Թվագրման մեջ հարյուրավորը և տասնավորը եղծված են, պահպանվել է միայն ...Դ։ Կ. Ղաֆադարյանը այն թվագրել է 1235 թ. (ՈՁԴ), որն անհավանական է։ Գ. Սարգսյանը իրավացիորեն այն համարել է 1224 թ. (ՈՀԴ), որը համապատասխանում է եկեղեցու կառուցման սկզբնական շրջաններին (թերևս այդ ժամանակ ավարտվել էր շքամուտքի կառուցումը)։

41 Կիրակոս Գանձակեցի, նշվ. աշխ., էջ 153։

մեծ գավթի հարավային դռան բարավորի վրա առկա արձանագրություններում, որոնցում նշված է, որ այն կառուցվել է տեր Հովհաննեսի ձեռնտվությամբ։ Այս փաստը հիմք է հանդիսացել որոշ հեղինակների համար Հովհաննեսին համարելու եկեղեցու կառուցող ճարտարապետը։ Սակայն այդ կարծիքը ժխտվում է վերջերս տողերիս հեղինակի հայտնաբերած և ցայսօր չընթերցված մի արձանագրությամբ, որը գտնվում է ավագ խորանի գմբեթարդը եզրափակող կիսաշրջանաձև քարի վրա հարթաքանդակված խաչի երկու կողմերում։ Արձանագրությունը հետևյալն է. ԱՆԵՑԻ ՎԱՐԴՊԵՏ ԳԱՋԱՆ։ Գաղան անունով ճարտարապետի մասին հիշատակություն կա Կարսի բերդի աշտարակներից մեկի վրա։ Չի բացառվում, որ նա և Նոր Վարագավանքի արձանագրության մեջ նշված Գաղանը նույն անձնավորությունը լինեն։ Նրանց գործունեության բիմականները համընկնում են։ Կարսի արձանագրության մեջ նշված է. ՄԽԻԹԱՐԻՉ ԳՐԻՉ ԵՒ ՆԿԱՐԻՉ ՈՉԳ (1244) ՏԷՐ ԱՍ ՉԱՒՐԱՑՈ ՉԹԱԳԱՒՐՆ ՄԵՐ Ի ՎԵՐԱ ԷԼԱՉԳԵՑ, ԿԱՏԱՐԵՑԱՒ ԲՐՉՆԵՐՍ ՉԵՌԱՄԲ ԸՆՉԿԱՆՆ ԳԱՉ(Ա)ՆԻՆ ԵՒ ՈԼՏԻՆ[42]։

Ս. Աստվածածին եկեղեցու անկյուններում տեղադրված են չորս կրկնահարկ ավանդատներ, որոնք շեշտում են նրա ներքին խաչաձևությունը։ Արևմտյան ավանդատների 2-րդ հարկերը բարձրանում են տակից շթաքարե մշակումներ ունեցող բարձակային աստիճաններով։ Սրանց լուսամուտները բացվում են եկեղեցու ներսում։ Ավանդատների աղոթասրահին նայող անկյունները արված են կիսագլանաձև պարզ սյուների տեսքով, որոնք ավագ խորանի կողքերից բարձրացող նման կիսասյուների հետ կազմում են թմբուկատակ կամարների հենարանները։ Անցումը քառակուսի հիմքից կլոր հատակագծով թմբուկին իրականացված է առագաստային փոխանցումներով։ Եկեղեցին ունի երկու մուտք՝ արևմտյան և հարավային, որոնք համապատասխանաբար բացվում են այդ ճակատներին կցված գավիթների մեջ։ Ներքին տարածությունը լուսավորվում է վերևներում վարդյակավոր, հեռանկարային ձևեր ունեցող, արևելյան կողմում զույգ, իսկ մնացած ճակատներին՝ մեկական պատուհաններով։

Եկեղեցին ներքուստ ունի ճարտարապետական զուսպ հարդարանք։ Բացառություն է կազմում ավագ խորանի ետին պատը, որի խորշերի եզրակալներն ունեն հյուսվածքային բարդ մշակումներ, մնացած մասերում առկա են քանդակային պարզ տարրեր։ Դրանք գլխավորապես հարթաքանդակային խաչերի կամ խորանների ձևերով պատկերված են ավանդատների մուտքերի բարավորներին, բեմի ճակատին և այլ մասերում։ Կատարյալ տեսք է ստացել արևմտյան մուտքից վերև գտնվող զարդաքանդակը, որը գլանիկով զանազան ձևավորումներ ու հանգուցակերպ լուծումներ ստացած մի ամբողջական պսակ է՝ դրված մուտքի վրա։ Բեմի ճակատային մասը զարդարված է զույգ կիսասյուներով և դրանք միմյանց կապող որմնակամարներով։ Այդպիսով բեմի ճակատը բաժանված է ութ խորանաձև մասերի։ Ներքին որմերի անկյուններով բարձրանում են կիսագլանիկներ, իսկ խաչթևերի թաղածածկերի տակով և խոյակների մակարդակով անցնում են դրանց տրամատը կրկնող քիվեր։ Վերջիններս հորիզոնական ջլատումներով անցումնային կապեր են ստեղծում ուղղահայաց պատի և թաղի միջև։

Ս. Աստվածածինը արտաքուստ ունի ինքնատիպ ճարտարապետական լուծում՝ հագեցված բարձրարվեստ և բազմաբովանդակ հարթաքանդակներով։ Առանձնապես հետաքրքրական է նրա արևմտյան ճակատը, որի վրա բացված ճոխ շրջանակով մուտքը բացառիկ տեղ է գրավում հայկական կառույցների շքամուտքերի մեջ։ Եզրային մասերով ներառված բարդ տրամատավոր ուղղանկյուն շրջանակի և բուն մուտքի միջանկյալ ամբողջ տարածությունը լցրացված է կանաչավուն և կարմրավուն քարերի որոշակի համադրմամբ զարդաքանդակներով, որոնց հորինվածքի հիմքում ընկած է խաչապատկերման

42 Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 56։

սկզբունքը։ Շեղաձև և քառաթև աստղանման քարերի համակցություններով ստացված մասնատումները հաղթահարվում են դրանց բարձրարվեստ հարթաքանդակների և գունային ընտրության կատարյալ լուծումներով։ Դրանցում ներկայացված են բուսակենդանական և երկրաչափական բազմատեսակ պատկերաքանդակներ՝ ոճավորված կենաց ծառեր, մարդկային գլխով կենդանակերպ ֆիգուրներ, շարժումների մեջ պատկերված տոտեմ կենդանիներ, թռչուններ և այլն, որոնք վաղագույն ժամանակներից հայկական զարդարվեստում հանդես են եկել որպես բեղմնավորման, պտղաբերման և ընդհանրապես կյանքի հավերժության խորհրդանշող գաղափարներ[43]։ Բովանդակությամբ դրանցից անքակտելի են վերին գոտու կտակարանային թեմաներով քանդակները, որոնցում պատկերված թևատարած հրեշտակը, լուսապսակով սուրբը, խաչելության հինգ ֆիգուրներից բաղկացած տեսարանը, վերջինիս աջ և ձախ կողքերի ծավալով դուրս եկած զարդագիրը՝ ՅՍ և ՔՍ մակագրություններով և տարբեր խաչապատկերներ հանգեցնում են կյանքի գոյի վերաբերյալ նույն գաղափարական մեկնաբանությանը։

Նկ. 5. Գլխավոր եկեղեցու արևմտյան շքամուտքի քանդակներից։

Շքամուտքի ընդհանուր հորինվածքի, ինչպես և առանձին մանրամասների մեջ առկա է Անիում XII դ. ծնունդ առած նշանավոր կառույցներից մեկի՝ Պարոնի պալատի շքամուտքի ազդեցությունը, որն իր կնիքն է դրել աշխարհիկ կառույցների վրա (Անիում գտնվող Սարգսի պալատ XIII դ., Հյուրանոց XIII դ.)։ Այդ սկզբունքի կիրառումը Նոր Վարագավանքում, արդեն եկեղեցական կառույցի վրա, բնականաբար, ինչ-որ չափով նոր բովանդակություն է ստացել՝ գլխավորապես թեխստական նշանակությամբ, որին համապատասխանում են վերը հիշատակված ավետարանական թեմաներով արված պատկերաքանդակները (Հայաստանի հյուսիս-արևելյան և հյուսիսային մասերում գտնվող մյուս վանքերից ձևավոր քարերով հավաքված նման հարդարանք հի-

43 Ա. Շ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 251—368։

շեցնող մոտիվներ ունեն Հին Գետիկի (XII դ.) և Մշկավանքի (XIII դ.) եկեղեցիների շքամուտքերը)։ Անիի ճարտարապետական դպրոցի աղերսներն ակնհայտ են նաև եկեղեցու արտաքին հարդարանքի մանրաքանդակներում։ Արևմտյան ճակատի պատուհանի վերին հորիզոնական մասը լրացված է արշմագիլների շարքով, որոնք փոքր տարբերություններով հիշեցնում են Անիի Առաքելոց եկեղեցու նմանատիպ քանդակային ձևերը։ Այդ ընդհանրությունները բացատրվում են ճարտարապետ Գագանի Անիից հրավիրված լինելու փաստով։ Նրա կառուցողական որոշ սկզբունքներ իրենց արտահայտությունն են գտել Նոր Վարագի գլխավոր եկեղեցու նշված հանգույցներում, որով բացահայտվում են Անիի ճարտարապետական դպրոցի հետ այս եկեղեցու ընդհանրությունների ակունքները[44]։ Կառույցի գլանաձև բարձրադիր թմբուկը և սլացիկ գմբեթը գեղեցիկ համաչափություն են ստեղծում մնացած ծավալների և ողջ համալիրի հետ։ Քանդակներից ազատ թմբուկի մակերևույթն ընդհատված է չորս ձիգ պատուհաններով։ Հետաքրքիր է, որ շեշտվածության համար ժամանակին դրանց երևսակալները ներկված են եղել կարմիր գույնով։ Լուսամուտներն իրենց պարզ շրջանակներով և դրանց վերևներում ավարտվող հավերժության նշաններով ու խաչքարերով թմբուկի միակ հարդարանքն են։ Եկեղեցու արևելյան և հյուսիսային ճակատները մշակված են երկուական գեղեցիկ խորշերով։ Արևմտյան և արևելյան ճակատներում գետնախարիսխների գլանաձև մասերը զուգավորվելով, ուղղահայաց վերև են բարձրանում՝ կենտրոնական մասերում շրջանցելով շքեղ երեսակալներով լուսամուտները և դրանց վերևներում եզրափակվում են խաչքարով (արևմտյանում այժմ պահպանվել է նրա շրջանակի ստորին մասը) և խաչով (արևելյանում), որի թևերը, իրենց հերթին, փոքրիկ խաչերի են վերածված։ Չնայած վերձիգ համաչափություններին (բարձրությունը մինչև գմբեթի ծայրը 25 մ է), եկեղեցին իր ծավալատարածական և գունային լուծումներով ներդաշնակ է Անապատի փոքրաչափ հուշարձանների հետ՝ ստեղծելով համալիրի ինքնատիպ կերպարը։

Փոքր գավիթ[45]։ Գլխավոր եկեղեցուց հետո, ըստ կառուցման հերթականության, հաջորդ շինությունը փոքր գավիթն է։ Այն տեղավորված է գլխավոր եկեղեցու հարավային ճակատի արևմտյան մասում (սրա և եկեղեցու արևմտյան ճակատները միևնույն հարթության վրա են) և իր մեջ ներառնում է Անապատի երեք հուշարձանների արևմտյան ճակատները։ Պատմական աղբյուրներում այս գավթի մասին հիշատակություններ չեն պահպանվել։ Միայն գլխավոր եկեղեցու և մեծ գավթի որոշ թվակիր արձանագրություններից կարելի է եզրակացնել, որ այն կառուցվել է 1237—1261 թթ. ընթացքում (1261 թ. արդեն ավարտվել էր մեծ գավթի շինարարությունը)։ Նկատի ունենալով, որ նշված ժամանակամիջոցում կառուցվել է նաև մեծ գավիթը և երկուսի շինարարությունը միաժամանակ տևել է ավելի քան 20 տարի, դրա ծանրակշիռ մասը պետք է վերագրել մեծ գավթին։ Հետազոտություններից պարզվել է, որ եկեղեցու թմբուկում և փոքր գավթի տարբեր մասերում պահպանված որոշ նշաններ պատկանում են միևնույն շինարար վարպետին։ Հետևաբար, կարելի է ընդունել, որ փոքր գավթի շինարարությունը սկսվել է գլխավոր եկեղեցու կառուցման ավարտից ոչ շատ ուշ, հավանաբար նրա օծումից հետո և տևել է 5—6 տարի։ Փոքր գավթից ավերակ վիճակում պահպանվել են նրա արևմտյան պատը մուտքով և երկու որմնասյուներով, ինչպես և՝ երդիկի տակի ճոխ, բարդ տրամատաձև քիվի մի մասը։ Անապատի եկեղեցու վրա հազիվ նկատելի են երկու, իսկ գլխավոր եկեղեցու պատին մեկ որմնասյուների հետքեր։ Վերջինիս դիմաց պահպանվել է հարավային որմնասյան խարիսխը։ Նախնական ուսումնասիրությունները հանգեցնում են այն ենթադրության, որ

---

44 Այս հարցի հետ ուղղակիորեն առնչվում է այն հանգամանքը, որ Վասակի կին Խաթունը Անիի Մեծ Հեղուր Վահրամի դուստրն էր (Կարո Ղաֆադարյան, նշվ. հոդվ., էջ 172)։

45 Ս. Խ. Մնացականյանը այս գավթին չի անդրադարձել։

գավիթը կենտրոնական մասերում ունեցել է երկու սյուն։ Այս դեպքում այն պետք է դասել Հայրավանքի և Շիմուրադի գավիթների շարքը[46]։ Երդիկի պահպանված հատվածներից պարզվում է, որ կառուցողների խնդիրն է եղել սահմանափակ չափերի մեջ տեղավորել նրա բարձրությունը՝ Անապատի համալիրի հետ որոշակի հարաբերակցություն ստեղծելու նպատակով, ուստի երդիկը և ծածկը պահող կամարների համար միայն որոշակի շառավիղներ են ընտրվել։ Դրանից բխում է նրա ներքին հորինվածքը, որի հիմնակմախքը հանդիսացող միջանկյալ սյուները, արևմտյան զույգ որմնասյուների միջև եղած հեռավորության չափով, տեղաշարժվել են դեպի արևելք։ Հատակագծում գավիթը հյուսիսից հարավ ձգված ուղղանկյուն է (8×10 մ)։ Դրանով այն տարբերվում է Հայրավանքի և Շիմուրադի գավիթներից, որոնց հատակագծերը մոտ են քառակուսուն։

Մեծ գավիթ։ Համալիրի վերջին կառույցը մեծ գավիթն է, որը կից է գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատին։ Սրա հարավային պատի արևմտյան եզրում բացված մուտքի բարավորի 1261 թ. արձանագրության մեջ հիշատակված է Հովհաննես Տուեցու անունը, որը վախճանվել է 1263 թ.[47]։ Նկատի ունենալով, որ այս գավիթը կառուցվել է փոքր գավթից հետո, կարելի է ընդունել, որ նրա շինության ժամանակաշրջանը սահմանափակվում է մոտավորապես 1245—1246 և 1250-ական թվականների երկրորդ կեսով։ Մեծ գավիթը, որի հատակագիծը գրեթե քառակուսի է (ներքուստ՝ 13,50×13,20 մ), երկու զույգ փոխհատվող կամարներով իրականացված կենտրոնակազմ կառույց է։ Այն իր տեսակի գավիթների մեջ (Խորակերտի, Դեղձնուտի, Ուշիի, Առաքելոցի, Բարդուղեմեոսի վանքերի գավիթներ[48]) խոշորագույնն է, որի ընդարձակ թռիչքը ծածկվել է առանց միջանկյալ սյուների օգնության։ Ներսի կողմում, յուրաքանչյուր պատին կից, ուղղանկյուն կտրվածքով որմնասյունները տեղաշարժված են դեպի պատերի անկյունները։ Դա պայմանավորված է եկեղեցու արևմտյան շքամուտքի քանդակազարդ երեսակալը չծածկելու հանգամանքով։ Որմնասյուներից ձգվող կամարները փոխհատումներով կառույցը մասնատել են ուղղանկյունաձև հատվածների, որոնցից երդիկի համար նախատեսված կենտրոնականը եղել է քառակուսի (5,0×5,0 մ) և ամենամեծը մնացած կողային դասերի նկատմամբ։ Ի տարբերություն մյուս նույնանման գավիթների, այստեղ ներքին պատերը վերևներում չեն եղրավորված կամարաձև բաժանումներով, որոնք որմնասյուների միջանկյալ մասերում առաջանում են գնդային մակերևույթի մաս կազմող ծածկերի և հարթ պատերի հատումներից։ Այստեղ հարցի լուծմանը մոտեցել են այլ սկզբունքով՝ ներքին պատերն ավարտվում են հորիզոնական ուղղաձիգ քիվերով։ Պատերի կենտրոնական բաժինների վերին անկյուններն ունեն հառաջակարկառված շթաքարային մշակումներ։ Սրանք քիվերի հետ հատակագծում ստեղծում են աղեղնաձև հիմքեր (դրանց շառավիղները հավասար են փոխհատվող կամարների շառավիղներին), որոնց վրա հանգել են կողային կենտրոնական դասերի երկկոր թաղերը։ Գավթի մնացած չորս անկյունները ծածկված են եղել հատվող թաղերով։ Կառույցը արտաքուստ զուրկ է հյուսիսային և մասամբ արևմտյան ճակատներից, քանի որ այդ մասերով այն կցված է բուսապատ ժայռերին։ Բացի երդիկից, որպես լուսավորության աղբյուր են ծառայել նաև հարավային ճակատի պատուհանը և դուռը։ Գավիթն ունի երկրորդ մուտք՝ բացված նրա արևելյան ճակատի հյուսիսային կողմում։ Իր տեղադրությամբ դա եղակի դեպք է հայկական բոլոր շրջանների վանքային համալիրների համար։

Մատուռներ։ Համակառույցի մեջ է մտել նաև գլխավոր եկեղեցու հյուսիսային ճակատի արևմտյան եզրում կցված մատուռը, որի մուտքը բացվել է մեծ գավթի մեջ։ Այն ներկայումս գոյություն չունի (անցյալ դարի 80-ական

---

46 Ս. Խ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 15։

47 Վարդան Վարդապետ, նշվ. աշխ., էջ 153—155։

48 Ս. Խ. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 15։

թվականներին մատուռը խարխուլ, սակայն կանգուն է եղել[49]. հավանարար այն եկեղեցուն է կցվել ուշ միջնադարում)։

Վանքից հարավ-արևմուտք գտնվող մյուս մատուռը ուղղանկյուն հատակագծով, թաղակապ, երկթեք ծածկով կառույց է։ Արևելյան մասում ավագ խորանն է, որի կիսակլոր ետին պատին գտնվում է միակ լուսամուտը։ Արևմտյան մասում բացված է քանդակազարդ շրջանակով մուտքը։ Չունի արձանագրություններ և չի հիշատակված մատենագրության մեջ։ Ճարտարապետական ձևերով և հարդարանքով սա նման է XIII դ. համանման կառույցներին։

Նույն ժամանակաշրջանով պետք է թվագրել նաև համալիրից հյուսիս-արևմուտք գտնվող միջնադարյան գերեզմանատան մատուռը, որն աչքի է ընկնում իր փոքր չափերով և հետաքրքիր դեկորով։ Այժմ ավերակ վիճակում է։

Համալիրում ինժեներական միջոցառումների և շինությունների կառուցման մասին արժեքավոր արձանագրություններ են պահպանվել Անապատի եկեղեցու և առանձին կանգնած մի խաչքարի վրա։ Ըստ գրանց, ումն Հաղարդեղ քար է կրել եկեղեցու կառուցման համար, իսկ Շառան ջուր է պարգևել վանքին։

Ամփոփելով նշենք, որ Անապատը կամ Նոր Վարագավանքն իր առանձնահատկություններով և համալիրի գերազանց ավարտվածությամբ հայկական միջնադարյան համակառույցների շարքում իր կայուն տեղն է գրաղեցնում։ Նրա արժանիքները պայմանավորված են ոչ միայն շինարվեստի ընդգավառում ունեցած ինքնատիպ ոճերով և բարձրարվեստ ճարտարապետությամբ, այլև որմերին պահպանված եզակի արձանագրություններով, որոնցով լուսաբանվում են մատենագրության մեջ տեղ չգտած հայոց պատմության կարևորագույն դրվագներ։

АРХИТЕКТУРНЫЙ АНСАМБЛЬ НОР ВАРАГАВАНКА

ГРАЧЬЯ КАРТАШЯН

Резюме

Один из уникальных архитектурных ансамблей средневековой Армении—Нор Варагаванк находится в Шамшадинском районе близ села Варагаван. В своё время он являлся духовным центром могучего княжества Ваграмидов. Монастырь был основан и построен в XII—XIII вв. последними представителями Кюрикидов Давидом II и его сыном Васаком. Ансамбль имеет своеобразный архитектурный стиль, редко встречающееся в средневековом армянском зодчестве планировочно-объёмное решение и конструктивные особенности. В отдельных частях главной церкви прослеживается влияние анийской архитектурной школы. Это объясняется тем, что архитектором сооружения был Газан из Ани.

---

49 Մակար եպ. Բարխուտարյանց, նշվ. աշխ., էջ 338։